ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«01» նոյեմբերի 2022թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 14-րդ, 18-րդ և 19-րդ կետերը, և Խորհրդի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N 4-Լ որոշումը՝ տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2022 թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 09^{00}-ին և ավարտվեց՝ ժամը 16^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մ. Թադևոսյան - «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

Քվեարկությանը չի մասնակցել

Ռ. Գևորգյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին (ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության մասնագետի (ծածկագիր՝ 68-27.3-Մ6-1) պաշտոնը փոխարինել գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-27.3-Մ2--------) պաշտոնով և որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրում (ծածկագիր՝ 68-27.6-Մ2-1) կատարել որակավորման պահանջի փոփոխություն):

Օրակարգային հարցի քվեարկությանն անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

Քվեարկության արդյունքում՝

1. Վ. Դումանյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Սարգսյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
3. Ա. Հայրապետյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
4. Մ. Թադևոսյան 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
5. Բ. Փափազյանը 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
6. Ա. Բախշյան 1-ին հարցին քվեարկեց «կողմ»,
7. Ա. Հակոբյան 1-ին հարցին քվեարկեց «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 7 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Խորհրդի հեռակա նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցին քվեարկեցին «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

Հարց 1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջարկվող փոփոխություններին՝ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության մասնագետի (ծածկագիր՝ 68-27.3-Մ6-1) պաշտոնը փոխարինել գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-27.3-Մ2--------) պաշտոնով և որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրում (ծածկագիրը՝ 68-27.6-Մ2-1) կատարել որակավորման պահանջի փոփոխություն:

Խորհրդի նախագահ՝ **Վ. Դումանյան**

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ **Ա. Գևորգյան**

ստորագրություն